

Մուստաֆասին, և առաւօտուս Պշի (25 Մարտ) խեղ-
դեալ ձգեցին ի յԱթմէյտանն եւ ապա վերուցին:

Պշի օրս (26 Մարտ) ժ եւ ժի մօլլա աքսորեցին՝
մեծամեծ զատիք եւ զԿուռճի Մէհէմէտ փաշան եւ
զիւր որդին եւ յՕտալարէն մէկ քանի չօրպածի. եւ
այլ մեծամեծ արք եւ երեւելիք աքսորեցին ի քաղա-
քէս: Զայս արար վէզիրն խրատովն նզովեալ մուֆ-
տուն:

Եշի (27 Մարտ) առաւօտուս Մարտիրոս վարդա-
պետն դաս քաշեց զԷսիլի թոռն վասն պառաւի մի,
որ կտակ առնէ Երուսաղէմայ Լ ոսկի եւ Էսիլի թոռն
կու խրատէ զտեարք պառվոյն թէ Մի՛ տայք զոսկին,
եւ նոքա չեն իտար, եւ ի սորա հետն զՊոմէշի որդին
զՅակորն, զի հայրն կտակ արարեալ Երուսաղէմայ Ի
ոսկի, եւ մինչեւ ցայժմ ոչ ետուն, վասն այնորիկ
դաս քաշեց:

Շարաթ (29 Մարտ) առաւօտուս քարոզ և երեկո-
յիս դաս ասաց Վարդապետն:

Եւ առաւօտուս Լ-իս օր Կիրակի Մաղկազարդի՞
քարոզ ասաց ըստ խորհրդին, եւ անթիւ յամբօխէն
ոչ դադարէին արքն. վերջեաց զքարոզն: Եւ օրս ի
տեղ զնաց Վարդապետն: Եւ Տէր Աւետիքն պատա-
րագ արար: Եւ Թաղէոս¹⁾ վարդապետն ի մեր ժամն
ժողով արաւ: Եւ երեկոյիս զնացաք և ի դուրս ելաք
անդաստան աւրհնել. լցաւ գաւիթն եկեղեցոյն, եւ
յորժամ կանգնեցաւ Վարդապետն ի քարոզ, նա՛ գա-
լին յերկու կողմանց որ Ք անգամ կանգնել տաւ եւ
նստել զժողովուրդն եւ կէսք կանգնեալ էին: Այսպէս
լցեալ էր այն անագին գաւիթն, զի ի վերի դռնէն
մինչեւ ի մեծ դուռս վարի որպէս թէ ծեփեալ էին և
ի մի կապակցեալ: Եւ յորժամ ելաք ի քարոզէն եւ

1) Թաթէոս.